# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 46

### ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքին՝ /ծածկագիր 07-056-0020-0001/ տրամադրվել է հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրառատ, 8 Փ 1:

2. Դիմել կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

2021 թ. հոկտեմբերի 22
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 47

# ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 8 Փ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումների, հաշվի առնելով Մարատ Սահակյանի կողմից տրված 2021թվականի հունվարի 19-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 8-րդ փողոց 1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.20000 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 594.6քմ արտաքին մակերեսով անասնաշենքը համարել Ջրառատ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2.ա/ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ/ շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ/ շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

3. Հաստատել «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված արտադրամասի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը:

4. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Մարատ Սահակյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 48

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Ռոզա Լևոնի Կոչյանին սեփականության իրավունքով պատականող /սեփականության վկայական թիվ 1318893/ բնակելի տանը Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում տրվել է հասցե՝ 3 Փ, 27 տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորոգրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ <u>ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ</u>

20 __ թ. ____________
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 49

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 42-Ն որոշումն՝ որոշում եմ.

1. Ջրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի «Ջրառատ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1.1.1.51 ծրագրի 4235 հոդվածի «166 000» թիվը փոխարինել «100 000» թվով
1.1.1.51 ծրագրի 4252 հոդվածի «75 000» թիվը փոխարինել «141000» թվով
1.1.1.51 ծրագրի 4232 հոդվածի «150 000» թիվը փոխարինել «95 000» թվով
1.1.1.51 ծրագրի 4267 հոդվածի «100 000» թիվը փոխարինել «155 000» թվով
1.1.1.51 ծրագրի 4111 հոդվածի «12739327.4» թիվը փոխարինել «11989327.4» թվով
4.5.1.51 ծրագրի 4251 հոդվածի «0» թիվը փոխարինել «500000» թվով
1.6.1.51 ծրագրի 4241 հոդվածի «150000» թիվը փոխարինել «300000»թվով
6.4.1.51 ծրագրի 4269 հոդվածի «540000» թիվը փոխարինել «640000» թվով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________
գ.Ջրառատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 50

### ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված Գարեգին Հովիկյանին պատկանող հողամասի /ծածկագիր 0018-0004/ հատակագիծը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 51

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգի, հիմք ընդունելով Գարեգին Հովիկյանի լիազորված անձ Գեղամ Թադևոսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Գարեգին Ժիրայրի Հովիկյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ N 12092018-07-0004վկայական) հողամասի2 մասի բաժանված մասերին՝ «Աշոտ Հակոբյան Գուրգենի» ԱՁ կողմից կազմված բաժանման սխեմայի համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող անշարժ գույքին (0.31106 հա մակերեսով)՝ գյուղ Ջրառատ, 7 Փ 5, 2-րդ առանձնացվող անշարժ գույքին (0.26893 հա մակերեսով)՝ գյուղ Ջրառատ, 7 Փ 5/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորոգրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 52

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 Փ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 36 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումների, հաշվի առնելով Մինաս Նազարյանի կողմից տրված 2021թվականի հունվարի 19-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի 7-րդ փողոց 3/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.03052 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 166.57քմ արտաքին մակերեսով արտադրամասը համարել Ջրառատ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2.ա/ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ/ շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ/ շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

3. Հաստատել «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված արտադրամասի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը:

4. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած Մինաս Նազարյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ տրամադրելու մասին:

6. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ համայնքի ղեկավարի 2021թվականի սեպտեմբերի 30-ի «Ջրառատ համայնքի թիվ 7Փ 3/1 հասցեում գտնվող սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու մասին» թիվ 36 որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 53

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 8 Փ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, 2003թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն, 2005թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1858-Ն որոշումների, Ջրառատ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 15-ի թիվ 12 որոշման, հաշվի առնելով Մարատ Սահակյանի համաձայնությունը՝ *որոշում եմ.*

1. Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող /սեփ. վկայական թիվ/04112021-07-0117, ծածկագիր՝ YZENNNTWECGG/ 8 փողոց 1 հասցեում գտնվող անասնաշենքը՝ 594.6քառակուսի մետր արտաքին մակերեսով, 530.62 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 2000 քառակուսի մետր մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Մարատ Սահակյանին:

2. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

Շինությունը, համաձայն համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

Շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1/ անասնաշենքի 1 քառակուսի մետրի համար՝ 1720 /մեկ հազար յոթ հարյուր քսան/ դրամ /տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.086/.

2/ Առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 528 /հինգ հարյուր քսան ութ/ դրամ:

4.Մարատ Սահակյանը պարտավոր է վճարել.

1/ համայնքապետարանի 900125001603 հաշվեհամարին՝ *1 022 712* /մեկ միլիոն քսաներկու հազար յոթ հարյուր տասներկու/ ՀՀ դրամ՝ անասնաշենքի գինը.

2/ Համայնքապետարանի 900125009101 հաշվեհամարին *770 584* /յոթ հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մարատ Սահակյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.
գ.Զորակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2021թվականի N 54

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-րդ մասի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետ՝ Ա.Սահակյանի 2021թվականի նոյեմբերի 10-ի թիվ 411-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արթուր Միշիկի Ասատրյանին 2021թվականի նոյեմբերի 11-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2021թվականի N 55

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3 Փ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, 2003թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն, 2005թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1858-Ն որոշումների, Ջրառատ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 15-ի թիվ 12 որոշման, հաշվի առնելով Մինաս Նազարյանի համաձայնությունը՝ *որոշում եմ.*

1. Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող /սեփ. վկայական թիվ/10112021-07-0138, գաղտնաբառ՝ 14B4KKTXHCBG/ 7 փողոց 3/1 հասցեում գտնվող արտադրամասը՝ 166,57 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 128.57 քառակուսի մետր ներքին մակերեսով, պարիսպը 1.13քառակուսի մետր մակերեսով և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված 305.2 քառակուսի մետր մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Մինաս Նազարյանին:

2. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

Շինությունը, համաձայն համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

Շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1/ արտադրամասի և պարիսպի 1 քառակուսի մետրի համար՝ 1720 /մեկ հազար յոթ հարյուր քսան/ դրամ /տարածագնահատման 12-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.086/.

2/ Առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 528 /հինգ հարյուր քսան ութ/ դրամ:

4.Մինաս Նազարյանը պարտավոր է վճարել.

1/ համայնքապետարանի 900125001603 հաշվեհամարին 288 444 /երկու հարյուր ութսունութ հազար չորս հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ՝ արտադրամասի և պարիսպի գինը.

2/ Համայնքապետարանի 900125009101 հաշվեհամարին 161146 /մեկ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մինաս Նազարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ